

Օժանդակ նյութեր տանիքածածկի համար

ELASTOPAST ELT 400-ը բիտումային հիմքով նյութ է կարերի լցոնման համար, էլաստոմեր պոլիմերներով վերափոխված, կիրառվում է սառը եղանակով՝ հերմետիկություն ապահովելու, վերանորոգման և սոսնձման համար:



Կիրառման ոլորտը

- շինությունների, ճանապարհների, կամուրջների, ամբարտակների և մեմբրանային ինժեներական կառույցների շինարարության ժամանակ ցանկացած հորիզոնական և ուղղաձիգ կարերի լցոնման համար,
- նախատեսված է կարերի միացման տեղերի (ծխատարների հիմքերի կարեր, օդատարների միացման կարեր, խողովակների տեղադրման համար բացված անցքեր) հերմետիկության, լցոնման և վերանորոգման համար,
- փափուկ բիտումային տանիքի սոսնձման և վերանորոգման համար,
- բիտումային մեմբրանների սոսնձման, տեղադրման և վերանորոգման համար,
- ավտոմեքենաների և ֆուրգոնների արտադրման պրոցեսում ջրամեկուսացման ապահովման համար,
- փայտյա մոտորանավակների և մակույկների միացման հանգույցների մեկուսացման համար,
- ոռոգման և ջրամատակարարման համակարգերում, ջրի պահման ռեզերվուարներում,

- մաշվածքների և ճաքերի առկայության դեպքում մեկուսացման համար,
- կանալների և ամբարտակների կառուցման դեպքում,
- հավաքովի կոնստրուկցիաներով կառուցված շինություններում և կառույցներում, ընդհանուր վերանորոգման աշխատանքների համար,
- պատուհանների և դռների կոնստրուկցիաների պատերին կպած մասերում,
- ջերմոցների տանիքի և պատերի հետ միացման մասերում,
- ջրհորդանների (желоб) միացման մասերում:

Տեխնիկական բնութագիր

- տեսակարար կշիռ՝ միջինում 1.70գ/սմ³
- աշխատանքային ջերմաստիճան՝ 35°C/110°C
- այրվելու ունակություն՝ չի բոցավառվում:

Նյութի առավելությունները

- իր կառուցվածքում էլաստոմերային պոլիմերների առկայության շնորհիվ նյութն օժտված է ճկունության, հարակցման (ադիզիայի) և անջրանցիկության բարձր ցուցանիշներով,
- կարող է օգտագործվել +5-ից +50°C ջերմաստիճանում: Ուլտրամանուշակագույն ճառագայթների հանդեպ կայուն է,
- կիրառվող մակերևույթը պաշտպանում է քայքայումից և խոնավությունից,
- նյութն ասբեստ չի պարունակում,
- ունի կիրառման լայն ոլորտներ՝ սկսած մանր կենցաղային վերանորոգումից մինչև շինարարության մեջ հատուկ պրոֆեսիոնալ կիրառումը,

- պահպանում է իր հատկությունները $-35^{\circ}\text{C}/+110^{\circ}\text{C}$ ջերմաստիճանային տիրույթում,
- նյութն այլ պլաստիկ նյութերին չի վնասում, չի այրում, ձևն ու կառուցվածքը չի խախտում,
- կիրառումից և պնդանալուց հետո այրվող չէ,
- ապահովում է ամուր սոսնձում և փայտի, մետաղի, պլաստիկի, բետոնի, ապակու, կղմինդրի, ջերմամեկուսիչ սալերի ու մենբրանների հետ ճկուն կայուն միացում,
- իր հերմետիկ և սոսնձվող բաղադրության շնորհիվ ունի կիրառման լայն տիրույթ՝ սկսած արդյունաբերությունից մինչև հիդրավլիկա,
- լայնորեն օգագործվում է բնակելի շենքերում: Կիրառումից արդեն մի քանի ռոպե հետո ունակ է իր վրա կրելու ոչ մեծ բեռնվածություն, հասնում է կցման մաքսիմալ ամրության լիովին չորանալուց հետո,
- կիրառումից և պնդացումից հետո նյութը երկար ժամանակ պահպանում է իր ճկունությունը,
- նյութը հատուկ մշակված է հեշտ կիրառման համար: Չի առաջացնում կաթոցներ, չի աղտոտում, այդ պատճառով միշտ ստացվում է արագ, մաքուր և պրոֆեսիոնալ արդյունք:

Կիրառման եղանակը

Նյութը թիակով (առտեռն) կամ ատրճանակով պատվում է մակերևույթի կամ կարերի վրա՝ վերջիններս նախապես մաքրելուց, բիտումային լուծույթը քսելուց և լիովին չորանալուց հետո՝ բարձր կաչողականություն ապահովելու համար:

Կիրառվում է սառը եղանակով, ուստի կարիք չունի տաքացման: Ընդ որում սառը եղանակային պայմաններում նյութն օգտագործելուց մեկ օր առաջ անհրաժեշտ է այն պահել սենյակային ջերմաստիճանում:

Նյութածախսը

Փոփոխական է՝ կախված մակերևույթի հարթությունից, շերտի հաստությունից և կարի լայնությունից:

Փաթեավորումը

Նյութը թողարկվում է թիթեյա տարաներով 17կգ (նետտո) քաշով կամ փոքրիկ բալոններով 310մլ ծավալով:

Պահպանման պայմաններն ու ժամկետները

Անհրաժեշտ է պահել փակ տարածքներում $5-30^{\circ}\text{C}$ ջերմաստիճանային պայմաններում:

Առողջության և անվտանգության հետ կապված նախազգուշացումներ

- անթույլատրելի է կրակի անմիջական ազդեցությունը,
- նյութի մեջ լուծիչի առկայության պատճառով կիրառման ժամանակ արգելվում է ծխել, կրակ վառել կամ օգտագործել կայծեր առաջացնող գործիքներ,
- փակ տարածքում կիրառելիս պետք է ապահովել լավ օդափոխություն և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ առողջության պաշտպանման համար,
- տարայի կափարիչը բաց չթողնել,
- խուսափել նյութի՝ աչքերի մեջ և մաշկի վրա ընկնելուց: